ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի

2026թ-ի հունվարի 20-ին կայացել է մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ:
Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունվարի 20-ի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. Մասնախմբերի և մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների կազմում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
4. Դպրոցում ՀՊՁ ներդրման հաջողությունների արձանագրում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
5. «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շջանակներում միջոցառումների քննարկում և բաշխում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
6. Առողջության համընդհանուր ապահովագրության մասին իրազեկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
7. Այլ հարցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունվարի 20-ի արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին՝

2. **Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքներին վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Ա. Գարեգինյանը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա մինչև ուսուցիչների թեմատիկ պլաններում և ծրագրերում այս պահի դրությանմբ դեռևս առկա են թերություններ և բացթողումներ՝ չնայած որ հանձնարարել էր 2-րդ կիսամյակի մեկնարկից առաջ վերանայել դրանք և միայն հետո ներբեռնել էլեկտրոնային մատյան:

Լսեցին՝

3. **Մասնախմբերի և մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների կազմում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Մանկավարժական խորհրդի նիստում անդրադարձ կատարվեց նիստերի արձանագրությունների ձևակերպումների հետ կապված առկա թերացումներին: Նշվեց, որ որոշ

դեպքերում օրակարգի և որոշումների ձևակերպումներն իրենց կառուցվածքով ավելի շատ նման են զեկույցների, իսկ զեկույցների բաժնում արձանագրված տեղեկատվությունից ոչ միշտ է հստակ ընկալվում ներկայացված բովանդակության իմաստը: Որոշ դեպքերում զեկույցների արձանագրման մասում նշվել է միայն թեման՝ առանց բովանդակային ամփոփ ներկայացման, ինչի հետևանքով դժվար է պատկերացնել, թե ինչ հարցեր են իրականում քննարկվել:

Լսեցին՝

4. **Դպրոցում ՀՊՁ ներդրման հաջողությունների արձանագրում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց, որ պատշաճ հաշվետվողականության ապահովման նպատակով անհրաժեշտ է առանձնացնել տարրական և հիմնական կրթության համար ՀՊՁ-ով նախատեսված այն 3 վերջնարդյունքներները, որոնց համատեքստում սովորողներն ունեցել են առավել նկատելի ձեռքերումներ:

Լսեցին՝

5. **Անվտանգ և ապահով կրթական միջավայր խորագրով միջոցառումների քննարկում և բաշխում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը տեղեկացրեց, որ «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շջանակներում ապրիլ – մայիս ամիսներին պետք է պլանավորել 2 միջոցառում՝ «Բնական աղետներ, բնապահպանական անվտանգություն» և «Անվտանգ ամառային արձակուրդ» թեմաներով:

Լսեցին՝

6. **Առողջության համընդհանուր ապահովագրության մասին իրազեկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը տեղեկացրեց, որ այսուհետ 200001 (երկու հարյուր հազար և մեկ) դրամ և ավել աշխատավարձ ստոցող աշխատողները օգտվելու են առողջապահության համընդհանուր ապահովագրությունից, իսկ նշված աշխատավարձից պակաս վարձատրվող աշխատողները կշարունակեն օգտվել սոցիալական փաթեթից:

7. **Այլ հարցեր**

Ա. Գարեգինյանը նախօրոք տեղյակ պահեց, որ հունիս ամսին իրականացվելու է թմատիկ պլանների խիստ վերանայում, անրադառնալու ենք թեմատիկ պլաններում օրվա նպատակների և վերջնարդյունքների ձևակերպումներին:

Ա. Գարեգինյանը հիշեցրեց, որ Ա. Թաիրյանը համաձայնել էր ժամանակավորապես՝ 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ միայն առաջին 2 շաբաթվա ընթացքում, իրականացնել տեխնոլոգիա առարկայի դասավանդումը և ներկայացրեց, որ պայմանավորված այդ հանգամանքով տվյալ ժամերը հունվարի 3-րդ շաբաթից տրվել են Հ. Մինասյանին:

Ա. Գարեգինյանը տեղեկացրեց, որ տնօրենի տեղակալ Լ.Մանվելյանի արձակուրդ մեկնելու կապակցությամբ վերջինիս պարտականությունների կատարումը հանձնարարվում է ԿԱԴԱՀ Հ. Մինասյան:

Լսելով 2026 թվականի հունվարի 20-ի մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանակավարժական խորհրդի 20.01.2026 թվականի նիստի օրակարգը:
2. Հանձնարարել ուսուցիչներին վերացնել էլեկտրոնային մատյաններում և թեմատիկ պլաններում առկա թերությունները մինչև հունվարի 23-ը ներառյալ:
3. Նիստերի արձանագրությունների կազմման և ձևակերպման որակի բարելավման նպատակով սահմանել միասնական ձևաչափ՝ հստակ տարանջատելով օրակարգը, զեկույցների ամփոփ բովանդակությունը և որոշումների ձևակերպումները, ինչպես նաև արձանագրություններում զեկույցները գրանցել ոչ միայն թեմայով, այլ նաև կարճ բովանդակային ամփոփմամբ՝ ապահովելով ներկայացված նյութի ընկալելիությունն ու ամբողջականությունը:
4. Եռօրյա ժամկետում առանձնացնել տարրական և հիմնական կրթության համար ՀՊՁ-ով նախատեսված այն 3 վերջնարդյունքներները, որոնց համատեքստում սովորողներն ունեցել են առավել նկատելի ձեռքերումները:
5. «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շջանակներում 2025 – 2026 ուսումնական տարվա ապրիլ – մայիս ամիսներին պլանավորել և կազմակերպել 2 միջոցառում՝ «Բնական աղետներ, բնապահպանական անվտանգություն» և «Անվտանգ ամառային արձակուրդ» թեմաներով:
6. Դպրոցի տնօրենի կողմից ներկայացված՝ 2025–2026 ուստարվա առողջության համընդհանուր ապահովագրության մասին իրազեկումն ընդունել ի գիտություն:
7. Ընդունել ի գիտություն.
   - հունիս ամսին առարկայական թեմատիկ պլանների վերանայման աշխատանքների անհարժեշտությունը,
   - տեխնոլոգիա առարկայի 4 դասաժամերի դասավանդումը 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Հ.Միանասյանին վերապահելու հանգամանքը,
   - Լ.Մանվելյանի պարտականությունների կատարումը ԿԱԴԱՀ Հ.Մինասյանին վերապահելու հանգամանքը:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

23.01.2026